

փլատակները, բայց հազիւ թէ երբ և իցէ դժբաղդ նամականին իբրեւ մարդաշատ և հայաշատ քաղաք վերականգնի:

Գ. 8. Մ.



ՏԱՃԿԱՀԱՅՔ

Կ. Պօլսի և Պասրիարփի Երջաբերականը եւ որբանոցների վերածումը արհեստանոցների

Գաւառական որբանոցներու տեղութեան պայմանաժամը կը սկսի լրանալ հետզհետէ և հարկ կը լինի փակել զանոնք մի առ մի, քանի սպառին բարեբարներու սահմանած նպաստներն և դադրին ընդհանուր նուիրատուութիւնը, որոց արդիւնքով երեսուն և չորս որբանոցներ բացուեցան կարօտեալ գաւառներու մէջ: Այս առժամանակեայ հաստատութիւնը պատասպարեցին ու խնամեցին ցարդ բազմութիւ անտէր մանուկներ՝ պատուար կանգնելով կարօտութեան դէմ, որու անմուռն զոհերը պիտի լինէին այդ մանուկներն, եթէ պետական շնորհներու հետ՝ մեր ազգայնոց ձեռնաւորութիւնը չհասնէին անոնց օգնութեան:

Այլ սակայն այդ որբանոցներուն մէջ կան տակաւին անչափահաս ու կարօտ տղաք, արժանի խնամքի ու պաշտպանութեան, կը գտնուին դեռ շատեր՝ որ չեն աւարտած արհեստն, զոր կուսանին, հայթայթելու համար իրենց ոգեպահիկն, երբ մեկնին որբանոցէն, ուստի հազիւ թէ գաւառներու մէջ լսուած որբանոցներէ ոմանց փակման լուրն, թախանձագին խնդիրներ կը տեղան ի Պատրիարքարան, երկարաձգելու դեռ անոնց տեղութեան շրջանն և արդիւնելու այն բազմադիմի անպատեհութիւններն, որ կրնան ծագիլ որբերու լքումէն:

Այսպիսի պարագայից առջեւ փակել յեղակարծ այդ դժութեան յարկերն և ցիւր ու ցան վտարել ու իրենց բախտին լքանել այդ մատաղատի մանկտին, մանաւանդ ցուրտ ձմեռով, որ պատած է արդէն գաւառներն բուքով ու ձիւնով, կարելի չէր,

առանց տաղնապելու խղճի խայթէ, առանց ծանր պատասխանատուութեան մ'ենթարկուելու Ազգին առջև, որ այնքան մեծ զոհողութիւններ յանձն առած էր թշուառութեան ձեռքէն խլելու համար բազմին այդ զրկեալներն, միանգամայն և Տէրութեան առջև, որ անոնց պաշտպանութիւն հրամայած էր, շնորհելով կարեւոր դիւրութիւններն:

Բայց հոգածութեան արժանիներն՝ որբանոցներու պատրաստեալներն չէին միայն: Անոնցմէ դուրս գանուող տղաքներն ալ, որ նպաստով կ'ապրէին, պէտք էր դնել այլ ևս այնպիսի վիճակի մը մէջ, որ չմնային անդործ և ցվերջ կարօտ օգնութեան, այլ կարենային աշխատիլ և իրենց ձեռաց վաստակովն հոգալ զիրենք: Իրաց այս վիճակին մէջ կարեւոր էր ուրեմն այնպիսի կարգադրութիւն մը, որ զօրէւ այդ կրկին պէտքերուն միապէս դարման ըրերէ, և նոյն իսկ այնպիսի եղանակաւ մը, որ ստարէք միանգամայն ժողովրդեան ալ ապրուստի միջոցներն ընդարձակելու, ցորչալի կարօտութիւնն համատարած էր, տնտեսական աննպաստ պարագաներու պատճառաւ: Միակ դարման մը կը ներկայանար, այն է՝ գաւառական գըլխաւոր կեդրոններու մէջ մնայուն ու կանոնաւոր արհեստանոցներ հաստատել, փոխան առժամեայ որբանոցներու, որ տեւական արդիւնք մը չէին կրնար ունենալ, և այս հաստատութեանց մէջ գիշերօթիկ պատասպարելով հանդերձ՝ անչափահաս ու պաշտպանութեան կարօտ որբերն և ի մասնաւորի զանոնք՝ որ փակելի որբանոցներէն դուրս պիտի ելնէին, ընդունիլ նաև ցերեկեայ՝ ուրիշ գաւառացի տղաքներ, և ասանց ամենուն սովբեցնել, ըստ տեղւոյն պիտանի արհեստներ և երկրագործական կարեւոր գիտելիքներ, առևտրական հրապարակներու վրայ խնդրուած շահաւէտ բերքերու մշակութեան համար, և այս արհեստանոցներու միջոցաւ ու զանազան կարգադրութեանց ներքև միանգամայն երկրագործ դասոյն գիւրութիւններ ընծայել, քաջալերելու համար մշակութեանց նոյն կարեւոր ճիւղը: Հետեւաբար, նպաստից Յանձնաժողովին հետ համախորհուրդ՝ այս կարգադրութիւնն ընելով, սահմանեցինք՝ յատուկ հրահանգով մը՝ արհեստանոցներու կազմակերպութեան եղանակն ու պայմաններն, և որոշեցինք միանգամայն մինչև դարուն յետածգել փակուամն այն որբանոցներուն, որոց պայմանաժամը լրացած էր:

Այս արհեստանոցներն, որք սահմանուած են այսքան էական կարօտութիւն մը լրացնելու, պիտի հաստատուին ու պահպանուին գլխաւորաբար այն կամաւոր նուէրովն, որ ամի ամի

Ս. Ծննդեան տօնին առ թիւ պիտի հաւաքուի մեր բարեսէր ազգայիններէն: Բարեգործութեանց մէջ ամէնէն քաղցրագոյնն ու հոգեպարարը չէ՞ միթէ, ու նաև դերադանցապէս վսեմն, որ զմարդ կը բարձրացնէ դէպի նախախնամողն տիեզերաց, օգնել ու տէր կանգնիլ որբին ու կարօտ մանուկին, անդօր արարածներ՝ անմեղ, անարատ, որ անկարող են զիրենք պահպանելու աշխարհային աղէտներու դէմ, որ անդիտակ զոհերն կը լինին բաղդին, որ կը տառապին առանց դանգատելու, որ կը ժպտին՝ արտասուելու ատեն, և հլութեամբ կը համակերպին ամենայնի, կրելով իրենց հոգւոյն խորն՝ դառնութիւնն իրենց բովանդակ վիշտերուն: Ահա այս դեռատի էակներուն, այս խեղճ պղտիկներուն պաշտպանութեան համար է նուէրն, զոր կը խնդրենք աղերսադին, այս Ս. Ծննդեան հրաշալի տօնին առ թիւ, յանուն մանկացելոյն Յիսուսի, որ այնքան կը խանդադատէր մանուկներուն վրայ, որ երբ կ'ուզէին հեռացնել զանոնք իրմէ՝ կը կրկնէր սաստելով. «Թոյլ տուք մանկուոյն դալ առ իս»:

Լի ենք յուսով որ սիրայօժար պիտի պատասխանէք մեր հրաւերին, և հասցնէք մեզ Ձեր նուէրն, առատօրէն և զուարթութեամբ բզլած Ձեր սիրտէն, վստահ ենք, որ այս կարևոր ձեռնարկին յաջողութեանն համար, որով և եթ պիտի պսակուի որքոց պաշտպանութեան գործը, պիտի բերէք մեզ Ձեր օգնութեան բաժինը և անտարբեր չպիտի մնաք այս նոր պէտքին առջև՝ դուք որ ցարդ չզլացաք օգնել կարօտին և լքեալին, դուք որ չնեղեցիք Ձեր խղճին անպաշտպան թողուլ անօրնական մանուկը: Գթութեան Տէրն ընդունի Ձեր գթութեան նուէրը, և անոր փոխան հեղու Ձեր վրայ իր բաղմաղեղ բարիքներն ու շնորհներն, և ինքն իր Ամենակալ Աջովն հովանի Ձեր վրայ՝ դերժ պահէ զՁեզ, Ձեր ընտանիքն, Ձեր զաւակներն, Ձեր պարագաններն, ամէն վիշտերէ: «Տուք և տացի Ձեզ»:

Հրահանգ կազմակերպութեան գաւառական ազգային արհեստանոցներու

Կ Ա Ձ Մ Ո Ի Թ Ի Ի Ն

Յօդ. 1. — Գաւառական առժամանակեայ որբանոցներու տնօրէնութեան պայմանաժամին լրանալովը՝ տակաւին անչափահաս գրանուող որբ և կարօտ մանուկներն իսպառ անխնամ չը թողլու հա-

մար աղգային պատրիարքարանի կողմէ առաջնորդական գլխաւոր կենդրոններու մէջ՝ ուր որ յարմար դատուի երկու սեռի տղոց համար՝ ուրոյն արհեստանոցներ պիտի հաստատուին:

Յօդ. 2. — Այս արհեստանոցներու ընդհանուր հասոյթներն են:—1) Կայսերական կառավարութեան կողմէ կարօտ մանկանց համար զանազան առիթներով շնորհուած նպաստ:—2) Բարեսէր աղգայնոց կողմէ տրուած տարեկան այն կամաւոր նուէրն, զոր սըրբազան պատրիարքն ամէն տարի ս. Ծննդեան ամօին առթիւ կտանայ ուղղակի՝ մասնաւոր կերպերով ղեմելով անոնց:—3) Բարերարներու նուիրած և սահմանած գումարները՝ որբերը որ և է կերպով հոգալու համար:—4) Կաւկալ թողուած ու այլ և այլ միջոցներով ստացուած պատահական նուէրները:—5) Գաւառական աղգային վարչութեանց և Թաղական Բարհոյճոց կողմանէ հայթայթուած նւապատներ:—6) Վանքերու տրամադրելի հասոյթներ և մասնաւոր սանատէրներու նպաստն, արհեստանոցներու յատուկ:—7) Եւ վերջապէս արհեստանոցներու արտադրած վաճառքներու զուտ շահն:

Յօդ. 3. — Արհեստանոցներու հասոյթներն կամփոփուին ու կը պահուին պատրիարքարանի նպաստից սնտուկին մէջ, որ կը գտնուի արդէն ս. պատրիարքին պահպանութեան ներքեւ:

Յօդ. 4. — Արհեստանոցք կը հաստատուին այն ժամանակ՝ երբ տրամադրելի բաւականաչափ հասոյթներ գոյանան, կամ բարերար մը մասնաւոր կարգադրութեամբ կամ առաջնորդական վիճակ մը տեղական միջոցներով ստանձնէ հոգալ ծախքը, առանց պարտք ծանրաբեռնելու առաջնորդարանին վրայ:

Յօդ. 5. — Այս արհեստանոցներու կազմութեան նպատակն է մասնաւորապէս որբ և անտէրունչ մանուկները խնամարկել, և ընդհանրապէս՝ թէ այս կարգի պատուարեալներու և թէ ուրիշ գաւառացի տղայոց ըստ տեղւոյն օգտակար արհեստներ և հոգագործական կարևոր գիտելիքներ սովորեցնել և միջոց ընձեռել անոնց, որ անձնական աշխատութեամբ հոգան իրենց ապրուստն, և ըլլան բարի և օգտակար անդամներ պետութեան և աղգին:

Յօդ. 6. — Որբ և անտէրունչ տղաքներէն որոշեալ թուով մաս մը գիշերօթիկ կընդունուի, որու $\frac{5}{14}$ -ը կառնուի վիճակին թեմերէն և $\frac{1}{14}$ -ը ըստ կարգադրութեան պատրիարքարանի ուրիշ կարօտեալ վայրերէն. իսկ ցերեկեայ կընդունուին այն տղաքներն, որք արհեստանոցի քաղաքին մէջ բնակութիւն ունին:

Եթէ փակուած որբանոցներէ ելնող տղոց մէջ կան այնպիսիք, որ տակաւին կը կարօտին պաշտպանութեան և որ և է արհեստ չեն կրցած սովորիլ, կը զետեղուին պատրիարքարանի որոշմամբ՝ յարմար արհեստանոցներու մէջ:

Յօդ. 7.—Արհեստանոցք կը հաստատուին յարմար վայրերու ու շէնքերու մէջ և, որչափ հնար է, եկեղեցիին մօտ:

Յօդ. 8.—Գիշերօթիկ տղաք որոշեալ ժամանակներու մէջ կերթան տեղւոյն ազգային դպրոցն, նախնական ուսումն ընդունելու և մնացեալ ժամանակներ կաշխատին արհեստանոցին մէջ:

Մ ա Տ ա կ ա ր ա Ր Ո Ւ Ք Ի Լ Ե

Յօդ. 9.—Գաւառական արհեստանոցք կը մատակարարուին յատուկ հոգաբարձութեանց ձեռք, որք վիճակին առաջնորդին կամ տեղապահին նախագահութեան ներքե կը բաղկանան հինգ անդամէ, որոց մին քահանայ պէտք է լինի, իսկ անդամոց երկուքը քահանայ կը լինին, երբ աղջկանց յատուկ է արհեստանոցն:

Հոգաբարձութեանց անդամք պիտի լինին իրենց ուղղութեամբ և պատուաւորութեամբ ծանօթ անձեր, ըստ բաւականին բարեկեցիկ վիճակի մէջ, և դատապարտութեան ներքե չիմկած:

Յօդ. 10.—Հոգաբարձութիւնք կը նստուին պատրիարքարանէն՝ ընտրելեաց երկպատիկ ցանկի մը վրայ, զոր առաջնորդն յայտագրով մը կը ներկայացնէ, դաւառական վարչութեանց հետ համախորհուրդ, տալով կարեւոր ծանօթութիւններն ընտրելեաց նկատմամբ: Սակայն պատրիարքարանն կրնայ նոյն ցանկէն դուրս անձեր ալ ընտրել:

Յօդ. 11.—Հոգաբարձութիւնք կը պարտաւորին մատակարարել արհեստանոցն որոշեալ ելմտացոյցին համաձայն, առանց բնաւ բաց կամ պարտք թողլու, հայրաբար խնամել տղաքն, վարել արհեստանոցի գործառնութիւններն, ընտրել որբերն և արհեստանոցի աշակերտող տղաքները, որոշել պաշտօնէաներն ու արհեստի վարպետներն և հսկել անոնց ընթացքին վրայ:

Յօդ. 12.—Արհեստանոցի պաշտօնակալաց ընտրութիւնն հոգաբարձութեան կողմէ կը տեղեկագրուի ազգ. պատրիարքարանի: Նոյն պաշտօնակալք չեն կարող միջամուխ լինել տեղական ազգային գործերու և պատրիարքարանի որոշմամբ կը դադրին անմիջապէս պաշտօնէ, երբ տեղի տան որ և է գայթակղութեան ու վէճի:

Յօդ. 13.—Հոգաբարձութիւնք լամեն տարեգլուխ կուղարկեն ի պատրիարքարան նոյն տարւոյ հաշուեցոյցն ու յաջորդին ելմտացոյցն՝ յատուկ տեղեկագրով մը՝ որով պէտք է պարզուի հաստատութեան ընդհանուր վիճակը և ձեռք բերուած արդիւնքն:

Յօդ. 14.—Հաստատութեան բոլոր ծախքերն տեղի կուենան հոգաբարձութեան որոշմամբ և նախագահին հրամանաւ: Հոգաբարձութեան անդամք չեն կրնար այս հաստատութեան հետ իրենց անձնականին համար առևտուրի յարաբերութիւն ստեղծել ուղղակի

և անուղղակի միջոցներով, նոյնպէս չեն կարող թոշակաւոր պաշտօն վարել հաստատութեան մէջ:

Յօդ. 15. — Հոգաբարձութիւնք ուղղակի կը թղթակցին պատրիարքարանի հետ և իրենց գրութիւնք նախագահին և բոլոր անդամոց ստորագրութիւնը պէտք է կրեն. նախագահը կը պարտաւորի իրեն շրկուած գրութիւն, դրամ և այլ ինչ անմիջապէս հաշորդել հոգաբարձութեան:

Յօդ. 16. — Հոգաբարձութեանց անդամք ոչ առանձինն և ոչ ալ առանց նախագահի չեն կարող գործեր տնօրինել կամ հրահանգներ տալ հաստատութեան պաշտօնէից, այլ կը պարտաւորին խորհրդակցութեամբ տալ որոշումներն, արձանագրելով ատենագրութեան մէջ, և նախագահին միջոցաւ գործադրութեան դնել:

Յօդ. 17. — Հոգաբարձութեանց պաշտօնն երկու տարի կը տևէ: Պատրիարքարանն իրեն կը վերապահէ վերահաստատել զանոնք, երբ յարմար դատի:

Յօդ. 18. — Հոգաբարձութիւնն կամ անդամներէն ոք երբ թերանայ իր պաշտօնին մէջ և զեղծումներ գործէ, պատրիարքարանը իրողութիւնը ստուգելէ ետքը՝ կը դադրեցնէ զայն պաշտօնէ:

Ա Ր Հ Ե Ս Տ Ա Կ Ա Ն Կ Ի Ր Ք Ո Ւ Ք Ի Ը Ն

Յօդ. 19. — Արհեստանոցներու մէջ յատուկ սենեակներ պիտի յատկանան, իրենց կարևոր կազմաձքով, ուր տղայք՝ գիշերօթիկ և ցերեկեայ՝ որոշեալ ժամերու մէջ պիտի պարապին արհեստ սովորելու, մասնագէտ վարպետներու միջոցաւ:

Յօդ. 20. — Արհեստներու տեսակն և որքանութիւնը հոգաբարձութիւնը կը սահմանէ ձեռնհաս անձերու հետ խորհրդակցելով, և պատրիարքարանի որոշման ենթարկելէ ետքը՝ կը սկսի գործադրութիւնն: Հոգաբարձութիւնք կը պարտաւորին նիւթական միջոցներու ներած չափով ընտրել այնպիսի արհեստներ, որոց արտադրութիւնք ոչ միայն տեղական սպառմանց յատուկ լինին, այլ և ուրիշ տեղեր տարածուելով՝ կարենան շահու աղբիւր մը դառնալ ժողովրդեան:

Յօդ. 21. — Պատրիարքարանն կը սահմանէ՝ հոգաբարձութեանց յայտագրին վրայ՝ արհեստական ճիւղին նիւթական պիտոյից համար յատուկ դրամագլուխ մը: Այս դրամագլուխը անկորուստ պէտք է պահուի, իսկ արտադրութեանց վաճառումէն գոյացած շահուն կէսը կը կցուի դրամագլխին և միւս կէսը կը պահուի մէկ մէկ նպաստ տրուելու համար արհեստաւոր կարօտ տղոց՝ իրենց արհեստին վերաբերող գործիքն գնելու համար, երբ արհեստն աւարտելով գործելու կեննեն:

Յօդ. 22. — Հոգաբարձութիւնք կը պարտաւորին արհեստանոցներու նիւթական պիտոյից համար դատ հաշիւ բռնել պատրիարքարանի կողմէ ցոյց տուած դրութեամբ ու ամեն երեք ամիս՝ հաշուեցոյցն հաղորդել պատրիարքարանի տարին մի անգամ ղրկելով նաև արտագրութեանց նմոյշներն, անոնց իսկական ծախուց հաշուեգրովը:

Յօդ. 23. — Հոգաբարձութիւնք կրնան արհեստարաններու մէջ պատրաստելի վաճառքներու համար ուղղակի յանձնարարութիւններ ընդունել և գործադրել, պատրիարքարանի յայտագրելով ի տեղեկութիւն:

Յօդ. 24. — Արհեստաւարտ աղոց տեղ անմիջապէս նորերն կառնուին և մեկնողներու անունները կը ծանուցուին պատրիարքարանի կարեւոր պարագաներով:

Յօդ. 25. — Արհեստանոցի աշակերտաց մէջ եթէ գտնուին այնպիսիք, որ գերադանց արհեստի ընդունակութիւն ցոյց տան ու ապագայ խոստանան, հոգաբարձութիւնը կը յայտագրէ անոնց անունը պատրիարքարանի, որ զանոնք կը ղրկէ ուր որ անկ է, կատարելագործելու համար իրենց արհեստն, եթէ նիւթական միջոցները ներեն:

Յօդ. 26. — Հոգաբարձութիւնք կը պարտաւորին ուսումնասիրել այն միջոցներն, որոնցով հնարին կրնայ լինիլ գիւղացի ժողովրդեան երկրագործական աշխատութիւններն արդիւնաւորել և հողին տեսակին ու կլիմային համաձայն՝ շահաւէտ բերքերու մշակութիւնը քաջալերել, որպիսիք են, ամիսն, բամպակ, թթենի (շերամի), շուշմայ, կտաւատ, կանեփ, և ամեն տարի ուրոյն տեղեկագրով մը ներկայացնել պատրիարքարանի իրենց ուսումնասիրութեան արդիւնքը և տեղւոյն առևտրական գործոց վիճակը, որպէս զի կարելիութեան սահմանին մէջ պատրիարքարանի կողմէ ընծայուին կարեւոր գիւրութիւններն՝ հողագործական աշխատութեանց արդիւնաւորման համար:

Յօդ. 27. — Այդ նպատակաւ հողագործական վարժութիւնք տեղի պիտի ունենան արհեստանոցներու մէջ, և այն պարագային մէջ, երբ յարմարութիւն չը գտնուի տեղւոյն մօտակայ վանքերու հողերն ու արտերն այդ նպատակին պիտի գործածուին՝ յատուկ կարգադրութեամբ:

Նպաստից յանձնաժողովոյ հետ խորհրդակցութեամբ կազմուած և հրամայուած ի գործադրութիւն:

Ի պատրիարքարանի, 20 նոյեմբերի 1901.

Պատրիարք Կոստանդնուպոլսոյ
Մաղափա Արեւպիսկոպոս